

տիր էր եւ բազմանդամ, կարելի է հաւաստել կայսեր պահանջով հրաւիրուած եկեղեցական ժողովի փաստով:

Ուրեմն, վստահաբար կարող ենք ասել, թէ Զ. դարի վերջին քառորդին Կ. Պոլսում կար քաղկեդոնականներից բաժան Հայոց համայնք, որը պիտի այլեւս ունենար իր աղօթատեղի ու համագումարանը:

Միք. Ասորու «Ժամանակագրութիւնը»¹³ թարգմանելիս (որի աղբիւրն այս գրուագում, անշուշտ, Եփեսացին է) վարդան Արեւելցին ճիշտ այդպէս է հասկացել ու մեկնաբանել բնագիրը.

1870 թ.	1871 թ. հրատ.
Իսկ սուրբ հայրապետն նախ քան զգնալ դեսպանացն կատարեալ էր ուղղափառ հաւատով եւ պատուով եղեալ իր շիրմի ուղղափառացն որ անդ հրամանաւ արքային, եւ ընդ յուսոյն իւրեանց ապրեցան Հայք Աստուծով զօրացեալ ի Պարսից եւ ի քաղկեդոնացւոցն, եւ եղեւ մեծ ամբողջութիւն հաւատոյ ուղղափառութեան (էջ 283-284):	...Եւ մինչ գնացին եւ տարան զթուղթն, եւ նա վաղագոյն իմացեալ էր զհերձուածոյ նոցա չարութիւնն եւ մեկնեալ ի նոցանէ կայր առանձին, որ եւ յամելով նորա (իմա՛ կաթողիկոսի - Պ. Մ.) ի Կոստանդինուպօլիս՝ ննջեաց ուղղափառ խոստովանութեամբ եւ մեծ պատուով ամփոփեցաւ յուղղափառացն, որոյ եղեւ մեծ ամբողջութիւն եւ հաստատութիւն հաւատոյ եւ պարծանք ուղղափառացն (էջ 265):

Այստեղ գործածուած «ուղղափառ» եզրը ե՛լ վարդանի մօտ, ե՛լ նրանից առաջ ու յետոյ Հայոց եկեղեցու պաշտօնական անուանակոչումն ու դաւանական ընկալումն է («Մենք տարապարտ կը կարծենք Լուսաւորչական, Գրիգորեան եւ այլ անունները, զորս ուրիշներ ստեղծած են եւ կիրարկած իբր պաշտօնական անուն, կամ քաջ չգիտենալնուն համար մեր եկեղեցիին անունը, եւ կամ նախանձի զգացումով մեր եկեղեցւոյ անուան նկատմամբ», - գրում է Մ. Օրմանեանը¹⁴: Ուրեմն «Շիրիմ ուղղափառացն» եւ «ամփոփեցաւ յուղղափառացն» նշանակում է Կոստանդնուպոլսում գոյութիւն ունեցող Հայոց (գուցէ եւ՝

13 St'ou Chronique de Michel Le Syrin, Paris, II, Paris, 1901, p. 305:
14 «Սիոն», 1970, էջ 417:

միաբնակ ասորոց ու այլոց) գերեզմանատուն: Թէ Զ. դարի համար այս իրողութիւնը որքան հաւաստի է, կարօտ է լրացուցիչ աղբիւրի, բայց այլեւս պարզ է, թէ Կ. Պոլսում հաւանաբար մէկից աւելի անգամ եղած Ժ.Գ. դարի պատմիչ Վարդանի ժամանակի համար անկասկած փաստ է: Եթէ կողմնակի վկայութիւններն էլ զանց առնենք, ապա Անանիա Շիրակացու, Փիլոն Տիրակացու, Դաւիթ Հիւպատոսի, Ստեփաննոս Սիւնեցու, Թութայելի, Պանտալէոնի, Յովսէփի (բոլորը է.-Ժ. դ. գործիչներ) շարունակական մշակութային գործունէու-

թիւնն այդ քաղաքում ապացոյց է ե՛լ համայնքի, ե՛լ եկեղեցու ու հանգստարանի գոյութեան, եւ գործիչներից շատերն էին «ծնեալ եւ սնեալ եւ ծերացեալ յաստուածապահ քաղաքիս Կոստանդնուպօլիս»¹⁵:

Թէ որտեղ էր «ուղղափառաց շիրմատունը» բազում վերուվարումներ, աւեր ու հրդեհ, փարթամացում ու անձուկացում տեսած այս քաղաքում, այժմ անկարելի է ասել: Վստահաբար գիտենք, սակայն, որ այն եղել է:

Գրականութեամբ աւանդուած եւ մինչեւ այժմ պահպանուած ու գործող հնագոյն գերեզմանատունը Պալլադիոնն է: Երեմիա Չէլչպի Բէօմիւրճեանի տեղեկութեամբ՝ այստեղ են իրենց հանգիստը գտել

15 «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե.-ժԲ. դարեր, Եր., 1988, էջ 73:

Սամաթիոյ Ս. Գէորգ, Հիսարտիպի Ս. Սարգիս, Նշանճիի Ս. Նիկողոս եւ Գումգաբուի Ս. Աստուածածին եկեղեցիների (ուրեմն եւ՝ թաղերի) ծուխ կազմող բնակիչները, ապա նաեւ՝

Ամէն մի յերկրէ եկեալք՝
Թ'է կամայ եւ թէ յակամայն,
Աւուրքք ինչ աստ պանդխտեալ՝
Պալլադիս եղև դամբարան¹⁶:

Երեմիայի չափածոյ Պատմութեան բազմաշխատ հրատարակիչ, բժիշկ եւ բանասէր Վահրամ Թորգոմեանն իրաւացիօրէն է նկատել, թէ Պալլադի գերեզմանատանը վերաբերող տողերը (Ե., 137-200) «Երեմիայի աշխատութեան ամէնէն կարեւոր մասը կը յօրինեն. անոնք իրենց մէջ Բիւզանդիոյ հայ գաղթականութեան պատմութեան մէկ շահեկան էջը կը ներկայացնեն, եւ կը յայտնեն անուններ, որոնք շատ ծանօթ չեն արդի հայ սերունդին»¹⁷: Եւ բանասէր-հրատարակիչը բացառիկ հմտութեամբ մասնաւորեցնում է աղբիւրի սոսկական թուարկումը՝ քննութեան առնելով ուշ միջնադարի ու նոր ժամանակների տասնեակ եկեղեցական, մշակութային եւ ազգային գործիչների ինքնութիւնը¹⁸, վերծանելով ու հրատարակելով նրանց պահպանուած տապանագրերը: Ի դէպ, Հ. Ղուկաս Ինճիճեանը եւս համոզուած էր, թէ Պալլադին պոլսահայոց հնագոյն հանգստարանն է, թէպէտ առկայ տապանագրերը 1551 թուականից հին չեն, բայց «նախագոյնք քան զայն՝ կամ են անգիր եւ կամ թաղեալ ի խորս»¹⁹: Մանրամասնու-

թիւնները թողնելով տեղիս տապանագրերի սպասելիք հրատարակութեանը, ասենք, սակայն, որ այս գերեզմանատանն են հանգչում 1895 եւ 1896 թուականների «պոլսական ջարդերուն անմեղ զոհերը, որոնց վրայ 1909-ին կանգնուեցաւ ժողովրդային հանգանակութեամբ շքեղ Յիշատակարան-կոթող մը»²⁰:

Հնութեամբ յաջորդը, թերեւս, Լտիրնէ-գաբուիճն է, որի մասին անգրանիկ տեղեկատուն դարձեալ Երեմիա Չէլչպին է:

Բսամուերկու դուռն գնամք՝
Լտիրնէ գափի սա կոչման,
Յաջ կողմերք գերեզմաներք՝
Պալլադոցըն մեր հայկազան²¹:

«Պալլադոցըն մեր հայկազան» արտայայտութիւնը սխալ չհասկանալու հատուկ մար, նկատենք, որ խօսքը Պոլսոյ Պալատի մար (կամ Պալատի) թաղի հայ բնակչութեան մասին է, որի միայն Ս. Հրեշտակապետ եկեղեցու ծխերի թիւը Երեմիայի օրօք (1635-1695 թթ.) 800 տուն էր («Ի ներքս մեր եկեղեցի՝ Հրեշտակապետին են անուան մեր կողմերք հարիւր տունք Հայոց՝ ցիր ու ցան՝ և ոչ ի մի սահման»²²:

Ղ. Ինճիճեանը եւս արձանագրում է այս գերեզմանատան հնութիւնը²³: Վ. Գալիւր Յովհաննիսեանի «Տեղագրութիւն Կ. Պոլսոյ» կամ «Վիպաղրութիւն Կոստանդնուպոլիս մայրաքաղաքի» (երկրորդ խոսքովը «Սիոն» հանգէսի խմբագրութիւնն է կարգել²⁴) աշխատութեան համապատասխան գրուագը եւ կատարում մի քանի կա-

16 Ստամպոլոյ պատմութիւն, Գ., տող 145-149:
17 Երեմիա Չէլչպի Բէօմիւրճեան, Ստամպոլոյ պատմութիւն. հրատարակեց եւ ծանօթագրեց տօքթ. Վահրամ Յ. Թորգոմեան, Վիեննա, 1913, [հտ. Ա.], էջ 351 (այսուհետեւ՝ Վ. Թորգոմեան):
18 Նոյն տեղում, էջ 351-393:
19 Հ. Ղուկաս Ինճիճեան, Աշխարհագրութիւն շրից մասից մասանց աշխարհի, Վեներիկ, 1804, հտ. Ե, էջ 116:

20 Վ. Թորգոմեան, Աշխարհագրութիւն, Գ., տող 145-149:
21 Երեմիա Չէլչպի Բէօմիւրճեան, Աշխարհագրութիւն, Գ., տող 38-41:
22 Նոյն տեղում, Գ., տող 201-103:
23 Հ. Ղուկաս Ինճիճեան, Աշխարհագրութիւն, Գ., տող 116, հմտ. Տարեցոյց Ազգային հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1902, էջ 197:
24 Տե՛ս «Սիոն», 1967

Մենք թուարկեցինք Պոլսոյ եւրոպական մասի Հայոց Հանգստարանները՝ բառիակ չասելով այստեղ գտնուող եկեղեցիների գաւիթներում ու որմնափակերում կատարուած թաղումների շատ ու շատ արձանագիր դամբարանների մասին, որոնցից ոչ քչերը հրատարակուած են Պոլսոյ պատմութեանը վերաբերող գրքերում ու յօդուածներում (նորորեայ հրատարակութիւններից յիշատակելի են Գ. Բամպուքճեանի, Վ. Քէօսէեանի, Բ. Թուղլաճեանի եւ ուրիշների գործերը): Չասացինք նաեւ, որ Ս. Փրկիչ հիւանդանոցի բակում է գտնուում Կիւլպենկեան գերդաստանի տոհմական դամբարանը: Պարտաւոր ենք, սակայն արձանագրել, որ Հայերէն տապանազրեր են եղել Թաքսիմի լատինների գերեզմանատանը: Այն հիմնուել էր ժ.Ձ. դարի կէսերին եւ փակուեց ու վերացուեց 1859 թ.:

Նշխարների հաւաքածոյի հետ Ֆէրիքէօյի նորահաստատ Լատին Հանգստարան փոխադրուեցին նշանակալի ու արձանագիր տապանաքարերը եւ ագուցուեցին մէկ ընդհանուր կոթողի մէջ: Գ. վրդ. Գալէմքեարեանը նոր տեղում տեսել ու վերծանել է Հայերի ինը տապանագիր՝ վեցը Հայերէն, երկուսը լատիններէն եւ մէկը Հայատառ թուրքերէն⁴⁹: Հրատարակչի մակաբերմամբ՝ այդ տապանագրերը ներկայացնում են լեհահայերի եւ տեղացի կաթողիկէ Հայերի:

Սուլթան Ահմետ արքայի միջնորդ քոյրը պարզ ասում է. «Այդ ոչ լինի առանց մատուցանելու ինչ մնա» (անդ, սիւն. 488):

⁴⁹ ՀԱ, 1913, էջ 350-358: Կարեւոր է նշել, որ ՀԱ այդ անդիմ համարում լոյս է տեսել Յ. Տէր-Յակոբեանի «Մոռացուած շիրիմ» հաղորդումը, որ ասում է, թէ Ագուլիսից «դէպի Տանակերտ տանող լեռնուղու «վանքի սանա» կոչուած սարի ստորոտում, ճանապարհի աջ կողմում, մի անճշամ ատապարտու գառիվայրի վրայ մի քանի անճշոք շիրիմների թում է մտել Մելիք Փարսադանի շիրիմը». «Այս է տապան Հալիծորեցի Մելիք Փարսադանի, որ է որդի Պաշասանի» (անդ, սիւն. 303): Ի՞նչ մեղք, որ սրբավայր դառնալու արժանի այս շիրիմն էլ այլեւս կորած պիտի մկատուէր:

Եթէ Երեմիա Չէլէպիի եւ նրա երկը ծանօթագրող Վ. Թորգոմեանի նկարագրութեանը հետեւելու լինենք, ապա Պոլսոյ Ասիական (Անատոլուական) աիւր բնակութիւն Հաստատած Հայոց Հանգստարանների թուարկումը Պէլքոզի եւ Գանտիլլի գիւղերով պիտի սկսենք, սակայն, Վ. Թորգոմեանի տեղեկութեամբ, երկուսի ազգային գերեզմանատներն էլ «անխնամ վիճակի մէջ» են՝ քարերը շրջած, տապանագրերը՝ եղծուած⁵⁰: Վերից դէպի վար իջնելով՝ յաջորդ Հայաբնակ թաղը (գիւղը) Գուզկուլուում է, ուր Սարգիս դպիր Յովհաննիսեանի եւ Ղ. Ինճիճեանի օրօք մերազգիք արդէն Հաստատապէս ներկայ էին⁵¹: Գրականութեան մէջ Ազգային գերեզմանոցին վերաբերող տեղեկութիւն չգտանք. Վ. Թորգոմեանը բաւարարուել է Սարգիս Խալֆալի, Յովհ. ամիրա Սերովբեանի (արքունի ճարտարապետներ) եւ Յովհ. եպս. Սեթեանի ինքնութեան մասնաւորեցմամբ:

Ասիական ափի «լի թանկագին յիշատակներով» եւ «Պոլսոյ Հայ գաղութի պատմական ամենակարեւոր էջերը յօրինող» քաղաքամասը Սկիւտարն է⁵², որին Երեմիա Չէլէպիին այս տողերն է նուիրել.

Յիսկէլէս ի վեր գնաս
Մի՞ն ժամու՝ Յոյնս 'ի ի Հայաստան
Եւնի մահալէ կոչի՝
Տանկօք եւ Հայք եզրիւ անկան:
Ուր գոյ մի՞ն եկեղեցի,
գոր շինեաց վանքի Չաքարիան՝
Գիշույ որդի վարդապետն,
Պատճառ այնմ առաքինութեան:
Անդ հասեալ եւ այնմ վախճանն
ի հողվարքն եղեալ ի տապան,
Ապա եւ Պողոս Թօխաթցի,ն,
Միթէ տերն ողորմի անցայն:
Եւնկի մահալէս ի վեր՝

⁵⁰ Տե՛ս ՀԱ, 1935, սիւն 132, 134:
⁵¹ Նոյն տեղում, սիւն 135-138:
⁵² Նոյն տեղում, սիւն. 315:

Յաջ եւ ահեակ բազում այգեստան,
Օստքն Հայոց մինչ մերձ
Ի սուլթան Մարասիմ Չամլուման⁵³:

Թէ ստուգապէս ե՞րբ եւ ի՞նչ պարագաներում է սկսուել Հայերի աստիճանական Հաստատումը Սկիւտարում, կարօտ է լրացուցիչ աղբիւրների վկայութեան: Նման պարագայում սովորաբար իբրեւ սկզբնաժամկէտ ընդունուում է պաշտամունքային կառոյցի երեւան գալու փաստը, եւ եթէ մենք էլ այդ ճանապարհով գնանք, կարող ենք ասել, թէ ժ.Ձ. դարի աւարտին արդէն այստեղ նկատելի քանակութեան Հայեր են ապրել: Սարգիս Դպիր Յովհաննիսեանը՝ հաղորդում է. «Աւանդեն ծերունիքն ի վիճակի Սրբոյ Կարապետին, թէ այս եկեղեցին յառաջագոյն էր մատուռ ինչ ի տեղում փոքրիկ աղբերն, որ կայ հանդէպ արտաքին դրան այժմու եկեղեցոյ ի կողմանէ վանուցն Երուսաղէմացոց, որ ապա յայսկոյս անցուցեալ եւ յայսմ տեղում զայն Հաստատեալ՝ շինեցին զայս եկեղեցի ի թուականին Հայոց ՌԿՁ (1617), հոգաբարձութեամբ վերոյիշեալ Վանեցի Չաքարիա վարդապետին, յորում ամի եղեալ է ի նմա եւ իսաչ մի արծաթեայ եւ գրեալ ի վերայ «Սուրբ Խաչս յիշատակ է Չաքարիա վարդապետին՝ օգնականութեամբ Իւսքիւտարու ժողովրդական ի դուռն սուրբ Կարապետին թուին ՌԿՁ (1617)»⁵⁴: Եթէ 1617-ից առաջ տեղում ազգայնոց մատուռ է եղել ուրեմն վատահաբար նրա կառուցումը տասնամեակներ առաջ պիտի տեղի ունետար: Վ. Թորգոմեանը վանեցի ու մշցի գործաւորների Հաստատում է ենթադրում Սկիւտարում տեղիս Վալիտէ ճամի եւ Զի-Սկիւտարում տեղիս Վալիտէ ճամի եւ Զի-Սկիւտարում տեղիս վանքերը կառուցելու շրջանում: Դատելով գրականութեան տուեալ-

ներից⁵⁵ ճամիների յետիւտ կառուցումը ընկնում է ժ.Ձ. դ. երկրորդ կէսին (Սինանի շրջան): Եթէ Նոր (Yeni) Վալիտէ ճամին կառուցուել է 1614-ին, ապա բուն Valide-ն նախորդել է դրան: Սակայն խնդրական է՝ Հայերի Հաստատումը իրօք այդ կառուցումներին է առնչուում:

Ինչ վերաբերում է Չաքարիա Վանեցու ինքնութեանը, ապա խօսքը երկիցս (1626-1629 եւ 1636-1639 թուականներին) Պոլսոյ պատրիարք եղած, Գրիգոր Դարա-նաղցու եւ Առաքել Դաւրիժեցու երկերից ծանօթ ու նաեւ սեփական տապանագրով մասին Չաքարիա/Չաքէոսի մասին է, մայրաքաղաք 1640-ին⁵⁶:

Սկիւտարի Հայութիւնը նախապէս կենտրոնացած էր երկու թաղամասում՝ Եէնի մահալէ (Նոր թաղ), ուր եւ գտնուում էր Ս. Կարապետ եկեղեցին (վերաշինութեան մի քանի էտապներով՝ 1727-ին՝ Յովհաննէս Կոթուրի օրօք, 1844-ին՝ Աստուածատուր պատլոտի օրօք, 1844-ին՝ «արդեամբ եւ ըրիարքի ժամանակ եւ 1888-ին՝ «արդեամբ եւ ծախիւք աստուածասէր Ունճեան Մաթուս ծախիւք հարազատաց», եւ Սելամիէ կամ եւ Աբիկ հարազատաց», եւ Սելամիէ կամ Սելամսը՝ «Ուր վայելչակերտ Հին եկեղեցին շինեալ նորոգեալ յանուն Սուրբ Խաչին»⁵⁷: շինեալ նորոգեալ յանուն Սուրբ Խաչին՝ Միւս երկու թաղամասերն են մեզ արդէն ծանօթ Գուզկուլուումը եւ Ինճատիէն:

Ս. Կարապետ եկեղեցու տեղում եղած մատուռի հիմնադրութեան տարիներից սկսած Սկիւտարում սկսում է գործել Հայոց գերեզմանատունը: Այն նախապէս ամփոփուում էր այսօր առկայ Հանգստարանի այն մասով, որ տեղացիները կոչում են Ս. Կարամասով, որ տեղացիները կոչում են Ս. Կարապետի մաս: Երուսաղէմի Գրիգոր Պարոնտէր պատրիարքի օրօք ոմն Ղյմութ Իւսկիւտարի Ս. Յակոբի վանքին է նուիրում Հայոց

⁵³ Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, Ստամբուլոյ պատմութիւն, Է, տող 133-140:
⁵⁴ Վ. Թորգոմեան, Մանթապարտիւնը... ՀԱ, 1935, սիւն. 319:
⁵⁵ D. Talbot Rice, Constantinopol. London, 1965, p. 154-157.
⁵⁶ Վ. Թորգոմեան, Մանթապարտիւնը, սիւն. 317-319:
⁵⁷ Ղ. Ինճիճեան, Ամարանոց Բիզանդեան, էջ 185:

կղզիներից մէկը, ուր մնաց ինն ամիս կամ ինը տարի⁶⁹: Թէ աւանդութիւնն իրական ինչ հենքի վրայ է հիւսուած՝ տակաւին ճշգրտելի է, բայց փաստ է նրա գոյութիւնը (1653 թ. Փիլիպպոս կաթողիկոսը Եասը Ատասը (Տափակ կղզի) կոչուածի վրայ Ներսէսի յիշատակին պատարագ մատուցեց): Երեմիայից մինչեւ մեր օրերը պոլսահայերն այն կոչում են Ներսէսի կղզի: Միւս կղզիներից համեմատաբար հնագոյն հայկական յիշատակարան ունեցողը Պուրկազ (Burgaz) կղզին է:

Տեղիս յունական աստուածաբանական դպրոցի եկեղեցու բակում կայ վիմագիր արձանագրութիւն (Ջրհորի բերանակալ, 1792 թ.), իսկ ներսում՝ մէկն աշտանակի վրայ եւ երկուսը՝ սրբապատկերների (1772, 1778, 1779 թուականներ⁷⁰): Իրաւացիօրէն նկատուած է, թէ չորսն էլ յունադաւան հայոց (Հայ-Հոռոմ) յիշատակարաններ են (այստեղից բնականոն հարց է ծագում՝ արդեօք դպրոցի ձեռագրական հաւաքածոյում էլ հայերէն գրչագրեր չկան): Այստեղ, ինչպէս նաեւ Հէյպէլի (Heybeli) եւ Պոյուք Ատա (Büyükkada) կղզիներում կան նոր ժամանակներին վերաբերող հայկական աղօթարաններ ու համայնքներ, սակայն կղզիաբնակ հայոց բուն հաւաքատեղին (նաեւ առաջնորդարանի վանատունը) եւ յիշատակներով հարուստը Գնալը (Kinalt) կղզին է, որը Պոլսին ամենամօտը լինելու պատճառով ընդունուած է եղել յունարէն Բոթթի (Πρόθη) կոչել եւ հայաշատութեան թելադրութեամբ՝ Հայոց կղզի (Ermeni Adasi): Այս կղզիի հետ է կապուած բիւզանդական հայազգի կայսրեր վարդան ինքնակոչի եւ Լեւոն Ե Հայկազնի կենաց վերջին օրերի պատմութիւնը (Թ. դարի առաջին քառորդ): Առաջինը համարուած է

կղզու բարձունքին գտնուող յունական վանքի հիմնադիրը, ուր եւ ապրեց կուրացեալ ապստամբը, իսկ երկրորդն աքսորուեց այստեղ ու սպանուեց (820 թ.): Այժմ նշմարելի են հնամենի վանքի հիմնապատերի հետքերը: Տապանները չեն պահպանուել:

Կղզում կառուցուած երբեմնի հայկական մատուռը 1857-ին փոխարինուել է Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցով՝ իր թիկունքին ունենալով նաեւ հայոց գերեզմանատուն:

Պոլսոյ հայոց հանգստարանների այս ամփոփ նկարագրութիւնն ինքնանպատակ է՝ նախ՝ վերձանուող տապանագրերի տեղագրութիւնն ու ժամանակագրութիւնը հասկանալի դարձնելու համար անհրաժեշտ է ծանօթանալ նրանց պատմութեանը եւ ապա՝ գերեզմանատների հնութեամբ, մեծութեամբ ու քանակով կարելի է կուսել այն դերը, որ ունեցել են հայազգիներն այս քաղաքի ու ողջ Բիւզանդական, յետոյ նաեւ՝ Թուրքական կայսրութեան տնտեսական, էթնիկական ու մշակութային պատմութեան մէջ: Բիւզանդական շրջանի այս կարգի յուշարձանների մասին քիչ բան գիտենք, որի պատճառը ոչ թէ նրանց չգոյութիւնն է, այլ քաղաքի ու նրա բնակչութեան կրած քաղաքակրթական ու քաղաքական գլխիվայր փոփոխութիւնը: Թէ ինչ կատարուեց քաղաքի հետ 1453 թ., քաջ յայտնի է դէպքերին ժամանակակից մատենագիրների վկայութիւններից (գրանց թուում է եւ Աբրահամ Անկիւրացին), եւ պատահական չէ, որ Մհամեդ Բ-ն, երբ երեք տարի յետոյ իր գահանիստն Ադրիանապոլսից այստեղ փոխադրեց, ստիպուած եղաւ Ասիական գաւառներից յոյն ու հայ բնակչութիւն բերել՝ քաղաքը կենդանացնելու համար, մանաւանդ արհեստաւորներ՝ աւերուած տներն ու պալատները վերստին կառուցելու: Անվերապահօրէն աւերածութեան էին դատապարտուել նաեւ Բիւզան-

69 Քննադատելու տե՛ս ՀԱ, 1934, սիւն. 111, նաեւ՝ ՀԱ, 1936, սիւն. 383-388:
70 Հրատ. տե՛ս «Մաղիկ», 1893, թիւ 32, նաեւ՝ ՀԱ, 1936, սիւն. 482-483:

դական շրջանից գոյութիւն ունեցող գերեզմանատները: Օսմանեան կայսրութիւնը դասական իսլամական երկիր էր, ուր գործում էին «անհաւատներին» վերաբերող բոլոր արգելքներն ու սահմանափակումները⁷¹: Իսլամի հետեւորդները իրաւունք ունէին վարելու եւ ցանելու քրիստոնեաների աւերուած գերեզմանոցները, իսկ տեղի ունեցած կռիւների ընթացքում այդպիսին էին դարձել բոլոր եղածները: Այդ է պատճառը, որ թուրքուած հայկական գերեզմանատներից ոչ մէկը Ժ.Ձ. դարից առաջ գրուած տապանագիր չունի: Աւելին՝ 1461 թուականից յետոյ Պոլսում հաստատուած հայկական նորակազմ համայնքը նշանակալի նիւթական զոհողութիւններ պիտի աւելնէր, էական ծառայութիւններ մատուցէր Օսմանեան իշխանութիւններին՝ գերեզմանատան հող ձեռք բերելու համար: Այդ նոյնը վերաբերում է եւ պաշտամունքային կառույցներին. Օսմար Խալիֆի սահմանումով՝ չէր կարելի նոր եկեղեցի կառուցել, վերանորոգել հինը, գմբէթադ կառուցել կամ աւելի բարձր, քան մահմեդական աղօթարանն է (յիշենք Մկրտիչ Նաղաշի կառուցած եկեղեցու պատմութիւնը):

Այս պարագաներում ինքնին հասկանալի է, թէ ինչ մեծ ջանք, զոհողութիւն, զարտուղի մերձեցում եւ հեղինակութիւն էր պէտք գերեզմանատներ ունենալու եւ պահպանելու, եկեղեցիները նորոգելու եւ նորերը կառուցելու համար:

Ճիշտ է, իսլամադաւան ժողովուրդներ (արաբներ, պարսիկներ, թուրքեր) միջնադարեան մատենագրութիւնների մէջ «Մահմեդի դաշնագիր» եւ «Ալիի հրովարտակ» կոչուող պարականոն արտօնագրեր, որոնցով քրիստոնեաներին պաշտպանութիւն եւ հովանաւորութիւն է հրա-

հանգուում⁷², սակայն իրականում դրանք սոսկ մատենագրական երկեր են եւ ոչ գործադրելի օրինադրութիւն: Ուստի չպիտի զարմանանք, որ Մանուկ Գարսեֆերեանն իր ծառայութեան դիմաց գերեզմանատեղի է խնդրում, Ադամ Ամդեցին «վաճառելով... զամենայն ինչս եւ զարդիւնս իւր՝ ի պէտս դամբարանիս ըստացաւ զգերեզմանատունս դամբարանիս ըստացաւ զգերեզմանատունս «բազայս», իսկ եկեղեցի կառուցողները «բազում կաշտս եւ առատ պարգեւս եւ երբեմն տուգանս եւս տալով» են զլուծւ բերում իրենց բարերարութիւնը:

«Տապանագիր» գրական հասկացութիւնը սահմանելու համար Սկիւտարի սոյն ձեռագիր ժողովածուն ուղեկցող յամառօտ «Յստաջաբանում» Գէորգ Բամպուքեանը արգարացիօրէն դիմում է Ստ. Ագոնցի արգարացիօրէն «գրքին, ուր հանգամարտանութիւն» գրքին, ուր հանգամանալի բնութագրութիւններ եւ տարատեսակների նմոյշներ են տրուած: Պէտք էր սակներ ինքնին եւ տրուած: Պէտք էր նկատել, սակայն, թէ Միսիթարեան գիտնականն իր ձեւակերպումների ժամանակ երկէտ ունի «տապանագրի» դասական ընկալումը՝ առաւելապէս անտիպ մատենագրութեան օրինակների հիմամբ ստեղծուած տեսական խմբաւորմամբ, ուստի վկայակոչում է նմանակութեան սկզբունքով ուշ միջնադարի մեր քերթողների յօրինած (անշուշտ՝ Միսիթարեան հայրերի աշխատանոցում) եւ անցեալի մեծերին նուիրուած ու երբեւէ տապանների վրայ չգրուած «տապանագրերը»: Եթէ անգամ զանց առնենք այդ օրինակների տաղաչափական կառուցուածքն ու մանաւանդ լեզուաոճական անյարիրութիւնները վերագրուող դարաշրանյարիրութիւնները վերաբերող իրաջանին, ապա մեզանում պահպանուած իրաջանին, ապա մեզանում պահպանուած իրաջանին, կան տապանագրերը (Զովունի, Դուին, Հաղբատ, Սանահին եւ այլն) ինքնին ապահովում են Ստ. Ագոնցի վկայակոչումներից

71 Նրանց թուարկումը տե՛ս В. А. Гордлевский, Избранные труды, т. IV, М., 1908, стр. 58-64:

72 Այդ մասին տե՛ս Յ. Ս. Անանեան, Մանր երկեր, Լոս Անջելէս, 1987, էջ 627, 632:

Ժամանակագիրը թուրքերէն բնագրով բերում է «Հրամանագիր դէնպետին», որ ննջեցեալների յիշատակը չվիրաւորելու համար այլեւս չենք վկայակոչում:

Այսպէս, ուրեմն, քրիստոնեայ հանգուցեալին չէր կարելի շարականերգութեամբ եկեղեցի տանել, յուղարկաւորութեան իրաւունքի համար տուրք պէտք էր վճարել: Այլեւս լիովին պատկերացնելու է, թէ հասարակաց գերեզմանատան տարածք ունենալու համար համայնքն ինչ արդելքներ պիտի յաղթահարէր եւ ինչպիսի ծախսեր կատարէր: Որ կացութիւնը դարեր շարունակ իրաւական փոփոխութիւն չէր կրում, կարելի է հաւաստիանալ քսաներորդ դարի սկզբին կայսրութեան դաւաճական քաղաքներից մէկին՝ Խարբերդին վերաբերող Վահան Թօթովենցի վկայութեամբ. գրողի հայրը քաջալերում ու ճանապարհածախս է տալիս խարբերդցի մի «քիւլխան բէյի» (տուն ու տեղ չունեցող երիտասարդ թուրք «մոխրակոյտի իշխանի»)՝ «բոբիկ ոտքերով Մեքքէ երթալու» համար:

Երեք տարի անց ուխտագնացը վերադառնում է՝ արդէն «մարգարէից ստացած

չտեսնուած նուէրներով» եւ երախտահատոյց լինում բարերարին. նրա միջոցով գաւառական հայ կալուածատէրն ու պաշտօնեան ոչ միայն գրաւուած հողեր ետ ստացաւ, ազգականներին բանտից հանեց, այլեւ «մինչեւ անգամ արտօնութիւն ստացաւ ընդարձակելու Հայոց գերեզմանոցը, մի հարց, որի համար մի ամբողջ սերունդ չարչարուել էր, մինչեւ անգամ Պոլիս, սուլթանի մօտ պատգամաւորութիւն էր գնացել եւ մերժուած վերադարձել...»⁸¹:

Եթէ գաւառական քաղաքում «գերեզմանոց ընդարձակելը» առ սուլթանը պատգամաւորութիւն իսկ ուղարկելով չի լուծուում, ապա որքան աւելի բարդ պիտ լինէր նման «կենսական տարածք», հայթայթելը կայսրութեան խիտ բնակեցուած մայրաքաղաքում: Ուստի պոլսահայոց գերեզմանատները, թեկուզ միայն մինչեւ մեր օրերը պահպանուածները, նաեւ ապացոյց են տեղիս հայկական համայնքի չէ թէ միայն բազմանդամութեան, այլ եւ կայսրութեանը մատուցած ծանրակշիռ ծառայութեան:

81 Վահան Թօթովենց, Կեանքը հին Հոովմէական ճանապարհի վրայ, Երեւան, 1979, էջ 145:

THE ARMENIAN INSCRIPTIONS OF CETATEA-ALBĂ FROM THE 10TH TO THE 18TH CENTURIES

Arpyar Sahakyan

1. The town of Cetatea-Albă

The town of Cetatea-Albă has recently celebrated 2,500 years of documented existence. Over the many centuries of its troubled history, it has borne several names, lived through several reignings, and sheltered people of many nations, Armenians included.

During most of its existence, Cetatea-Albă stood at the crossing of both military and trade routes and commanded a large estuary (of 7 by 22 miles) at the mouth of the Dnestr, a river that has been navigable from the earliest times. There, in Cetatea-Albă, a great many goods gathered together coming from afar and scattered to even farther horizons. The river mouth being strangled, the estuary is actually a lagoon of saltish water bordered by a high, hilly shore upon which military defence fortifications were naturally erected in the old days. On the south-eastern side of the hills one can still see the half-excavated vestiges of a powerful Greek stronghold and the remainings of ancient baths with their mosaic intact. The famous "city of Stephen the Great" is still preserved on the hilltop; it was in fact begun by Genoese builders, enlarged by Prince Alexander the Good, fortified by the Turks, rebuilt and enlarged again by Stephen the Great, but by other subsequent Moldavian rulers as well, so that it can easily be numbered among the world's greatest medieval military constructions. There are authors who claim that certain constructive details in it recall the Armenian strongholds in Cilicia, the German builders, the Moldavian fortifications a.s.o. The stronghold had 16-ft. thick walls and was surrounded by a defence fosse more than 40

ft. wide and 80 ft. deep. Cetatea-Albă, this so-called "Eastern port", could not have had a smooth existence over such a long span of time. Each of its ages had its own significance and the Armenians witnessed more than one.

At mid-14th century, due to the conquests of the Golden Horde led by Ganibeg-Khan, the trade route passing through southern Poland was abandoned. Hence, a new trade route was established somewhat later, in 1382, that went all the way from Lemberg, through Cernăuți, Suceava, Pașcani, Iași, Tîrgul Lăpușna, down to Cetatea-Albă and Chilia. The Caffa merchants who traded in Lemberg would rather have their counterparts in Cetatea-Albă act as middlemen. The Cetatea-Albă and Chilia customs records of the time mention valuable goods such as silk, brocade, taffeta, cotton, soap, rice, wine a.s.o. The great income the town merchants made allowed them to pay a substantial annual tribute to the Sublime Porte. This may be the reason why Sultan Bayazet granted certain privileges to the Chilia and Cetatea-Albă merchants, in the latter half of the 15th century, with regard to the trading of calves, horses, sheep, swine, fresh and salted fish, caviar, oil, fishbone glue, timber, wood, and log-loaded rafts. Polish grain was being loaded in Cetatea-Albă onto ships that sailed to Cyprus, and Trebizond wine was being shipped in. During the 16th century, in spite of history's ups and downs, there was a particular flourishing of all trades, so that 60 to 70 ships came into the Cetatea-Albă port from Nicosia, Constantinople, Sinope, Caffa a.s.o. every day, while caravans of full-loaded carts ar-